ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

ՀՀ-ՍՄՔԲ-ՔՀ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով գնանշման հարցման հայտերի գնահատման նիստի

ք. Քաջարան **25 սեպտեմբերի 2017թ**

ժ. 15:00

Նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վահե Գրիգորյան

անդամներ՝ Զարինե Համբարձումյան

Սիրանույշ Անդրեասյան

Նարե Համբարձումյան

Գայանե Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Ղահրամանյան

1. Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Վ.Գրիգորյան

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Տեղեկատվություններ <<ԱԺԴԱՆԱԿ>>ՍՊԸ-ի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության գնահատման մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա գնահատող հանձնաժողովը <<ԱԺԴԱՆԱԿ>> ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը գնահատում է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3.Տեղեկատվություն առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին

<<ԱԺԴԱՆԱԿ>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը,այդ թվում՝

1) հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի պատճենները:

2) իր կողմից հաստատված այն տեխնիկական միջոցների տվյալները, որոնք նախատեսում է օգտագործել պայմանագրի կատարման ժամանակ,ինչպես նաև դրանց տեխնիկական անձնագրերի և այդ միջոցների նկատմամբ մասնակցի սեփականության կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները:

3) իր կողմից հաստատված տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին,ինչպես նաև հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի պատճենները:

Վերոնշյալ որակավորման չափանիշները գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

4.ԳՀ ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփում

ՀՀ-ՍՄՔԲ-ԲՀ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել <<ԱԺԴԱՆԱԿ>> ՍՊԸ-ն ,և նրան կառաջարկվի կնքել պայմանագիր՝ անգործության ժամկետի ավարտից հետո սահմանված ժամկետում պայմանագրի նախագիծը ստորագրելու և պայմանագրի ապահովում ներկայացնելու դեպքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

5. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

Հաստատել մինչև պայմանագիր կնքելը տեղեկագրում հրապարակվող պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը,որը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին ու հայտարարություն անգործության ժամկետի վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Վահե Գրիգորյան / /

անդամներ՝ Զարինե Համբարձումյան / /

Սիրանույշ Անդրեասյան / /

Նարե Համբարձումյան / /

Գայանե Խաչատրյան / /

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Ղահրամանյան / /